

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ВОПРОСЫ ВОСТОКОВЕДЕНИЯ

JOURNAL OF ORIENTAL STUDIES

*Նվիրվում է պրոֆեսոր  
Գուրգեն Մելիքյանի 85-ամյակին*

№ 20

ԵՐԵՎԱՆ  
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
2021

Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի  
արևելագիտության ֆակուլտետի  
գիտական խորհրդի որոշմամբ

**Խմբագրական խորհուրդ՝**

Մելքոնյան Ռուբեն պ.գ.դ., պրոֆեսոր (խմբագիր)

Մելիքյան Գուրգեն բ.գ.թ., պրոֆեսոր

Խառատյան Ալբերտ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ

Սաֆրաստյան Ռուբեն պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Հովհաննիսյան Լավրենտի բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ.-անդամ

Հովհաննիսյան Դավիթ բ.գ.թ., պրոֆեսոր

Սաֆարյան Ալեքսանդր պ.գ.թ., պրոֆեսոր

Ոսկանյան Վարդան բ.գ.թ., դոցենտ

Քոչարյան Հայկ պ.գ.թ., դոցենտ

Սարգսյան Լևոն պ.գ.դ., պրոֆեսոր

Կարապետյան Ռուբեն պ.գ.դ.

Տեր-Սաթևոսյան Վահրամ պ.գ.դ.

Գրեկյան Երվանդ պ.գ.դ.

Րեպենկովա Մարիա բ.գ.դ., պրոֆեսոր (Ռուսաստան)

Կուզնեցով Վասիլի պ.գ.թ., դոցենտ (Ռուսաստան)

Էքմեքչյան Լեոնա PhD (ԱՄՆ)

Իլյա Յակուբովիչ բ.գ.դ., պրոֆեսոր (Գերմանիա)

Ահմադջան Ղուրոնբեկով բ.գ.դ., պրոֆեսոր (Ուզբեկստան)

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

*Քննարկի Միոգոյան*

ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆ – 85.....7-9

### Արաբագիտություն

*Հայկ Քոչարյան, Մոհամմեդ Հաջ Իբրահիմ*

«ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ 21-ՐԴ ԴԱՐՈՒՄ.  
ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՄԱՆ, ՏԵՍԱԿԱՆ ՈՒ  
ԻՐԱՎԱԿԱՆ ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ»  
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ (ՄԱՍ Բ).....10-21

*Մերի Չիլիսիյան*

«ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ» ԴՈՒՐԱՆՈՒՄ. IHYĀ’ AL-MAWĀT  
ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ.....22-29

*Հարություն Մայժևոյան*

ԱՄՆ-Ի ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԾԱՅՐԱՀԵՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՍ  
ՊԱՅՔԱՐՈՒՄ («ԱԼ-ԿԱԻԴԱ»-Ի ՕՐԻՆԱԿՈՎ).....30-39

*Մոհամմեդ Հաջ Իբրահիմ*

ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԴԵՍ ՊԱՅՔԱՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ  
ՇՐՋԱՆԱԿԻ ՄՇԱԿՈՒՄԸ 9/11-ԻՑ ՀԵՏՈ.....40-46

*Համիկ Երիցյան*

ԲԱԶՄԱՍՇԱԿՈՒԹՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ  
ՀԱՆՐԱԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՁԵՎՎՈՐՄԱՆ  
ԳՈՐԾՈՆ (ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՅՅԱԼ ԷՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՕՐԻՆԱԿՈՎ).....47-54

### Թյուրքագիտություն

*Վարուժան Գեղամյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹՈՒՐԹԻԱՅԻ  
ՊԵՏԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹԻ ԵՎ ՀՈՏՈՐԱԲԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ 2019-2021ԹԹ.....55-71

*Մարիամ Մելքոնյան*

ՀԱՅԱՏՅԱՑՈՒԹՅԱՆ ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐՆ ՈՒ «ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔՆ» ԻԼՀԱՄ ԱԼԻԵՎԻ ԵԼՈՒՅԹՆԵՐՈՒՄ..... 72-86

*Ռաֆիկ Խաչատրյան*

1974 թ.-ի ԿԻՊՐՈՍ ԹՈՒՐԶԱԿԱՆ ՆԵՐԽՈՒԺՈՒՄԸ ԵՎ ՆՐԱ ՆԱԽԱԴԻՅԱԼՆԵՐԸ..... 87-98

*Գառնիկ Դավթյան*

ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏԿԵՐԸ ԱԴԻԲԵՉԱՆՈՒՄ..... 99-105

*Թամարա Աղանայան*

ՊԱՆԹՅՈՒՐՔԻՍՏ ԳՐՈՀԱՅԻՆՆԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ. «ԿՈՄԱՆԴՈՍՆԵՐԻ ՃԱՄԲԱՐՆԵՐԻ» ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ, ՆՊԱՏԱԿԸ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ (1968-1971 թթ.)..... 106-117

**Իրանագիտություն**

*Լիանա Պետրոսյան*

ԻԻՀ-ՈՒՄ ԹԱԼԻՇ ՆԱՀԱՆԳԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹԸ Մ. ԱՀՄԱԴԻՆԵՏԱԴԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ..... 118-123

*Անի Նահապետյան*

ՀՐԵԱՆԵՐԸ ԿՅՈՒՐՈՍ Բ ՄԵԾԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ ԵՎ ՎԵՐՁԻՆԻՍ ԿԵՐՊԱՐՆ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՈՒՄ..... 124-140

*Նարե Գևորգյան*

ԻԻՀ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ԽՈՐՀՐԴՈՒՄ ԱԼԻ ԱՔԲԱՐ ՀԱՇԵՄԻ ՌԱՖՍԱՆՉԱՆԻԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ..... 141-152

*Յասեր Քարամզադե Հաֆթխանի*

ԹԱԼԻՇԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊՈԵԶԻԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ..... 153-160

## CONTENT

<i>Knarik Mirzoyan</i> Gurgen Melikyan - 85.....	7-16
---	------

### Arabic Studies

<i>Hayk Kocharyan, Mohammed Haj Ibrahim</i> “PARADIGM OF TERRORISM IN THE 21ST CENTURY: A CRITICAL INVESTIGATION INTO THE DEFINITIONAL, THEORETICAL AND LEGAL FRAMEWORKS ASSOCIATED WITH TERRORISM” SURVEY (PART TWO).....	10-21
--	-------

<i>Meri Chplakhyan</i> «AGRICULTURE» FROM THE PERSPECTIVE OF AL-QUR’AN. DEFINITION OF THE CONCEPT: «IHYĀ’ AL-MAWĀT».....	22-29
--	-------

<i>Harutyun Matevosyan</i> US FOREIGN POLICY CHANGE IN STRUGGLE WITH ISLAMIC EXTREMISM (EXAMPLE OF AL-QAEDA).....	30-39
---	-------

<i>Mohammed Haj Ibrahim</i> EVOLVING LEGAL FRAMEWORKS IN COUNTERING TERRORISM AFTER 9/11.....	40-46
---	-------

<i>Hasmik Yeritsyan</i> MULTICULTURE AS A FACTOR FOR FORMING SOCIOLINGUISTIC SITUATION (EXAMPLE OF THE UNITED ARAB EMIRATES).....	47-54
--	-------

### Turkic Studies

<i>Varujan Geghamyan</i> MAIN THESES OF TURKEY’S STATE DISCOURSE AND RHETORIC ABOUT ARMENIA AND ARMENIANS IN 2019-2021.....	55-71
--	-------

<i>Mariam Melkonyan</i> DEMONSTRATIONS OF ARMENOPHOBIA AND	
---	--

"HATE SPEECH" IN THE TALKS OF ILHAM ALIYEV.....	72-86
<i>Rafik Khachatryan</i> THE CYPRUS TURKISH INVASION OF 1974 AND ITS PRECONDITIONS.....	87-98
<i>Garnik Davtyan</i> AZERBAIJANI ELECTION OVERVIEW.....	99-105
<i>Tamara Aghamalyan</i> PANTURKIST MILITANTS IN TURKEY: THE PROCESS OF FORMULATION, AIMS, ACTIVITY OF THE CAMPS OF COMMANDOS.....	106-117

### **Iranian Studies**

<i>Liana Petrosyan</i> THE DOMESTIC POLITICAL DISCOURSE ON THE FORMATION OF TALYSH PROVINCE IN THE ISLAMIC REPUBLIC OF IRAN DURING THE REIGN OF M. AHMADINEJAD.....	118-123
<i>Ani Nahapetyan</i> JEWS IN THE GREAT POLITICAL PROGRAMS of CYRUS II AND THE LATEST CHARACTER IN "THE BIBLE" .....	124-140
<i>Nare Gevorgyan</i> THE ROLE AND ACTIVITY OF ALI AKBAR HASHEMI RAFSANJANI IN THE ASAMBLEA OF EXPERTS OF PUBLIC ADMINISTRATION OF THE ISLAMIC REPUBLIC OF IRAN.....	141-152
<i>Yaser Karamzadeh Haftkhani</i> AN INVESTIGATION OF THE STRUCTURE OF TALYSHI FOLK POETRY.....	153-160

**ՀՐԵՄՆԵՐԸ ԿՅՈՒՐՈՍ Բ ՄԵԾԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ  
ԾՐԱՔՐԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՒՄ ԿԵՐՊԱՐՆ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՈՒԹՅԱՆ**

*Բանալի բառեր՝ Աքեմենյան տերություն, հրեաներ, կրոնական քաղաքականություն, հայրենադարձություն, մարգարեական տեքստեր, բարեղոնական գերություն, ծավալապաշտություն*

Աքեմենյանների ծավալապաշտական քաղաքականության առանձնահատկությունները, նվաճված երկրների ու ժողովուրդների հետ փոխհարաբերությունները մեծ հետաքրքրություն են ներկայացնում պատմագիտության մեջ: Հարցն առ այսօր արդիական է, քանի որ Աքեմենյան արքաների վարած քաղաքականությունը պետական մտածողության, պետականագիտական հայացքների, դիվանագիտական հարաբերությունների կառուցման փայլուն օրինակ է՝ ուղղված կենտրոնական իշխանության հզորացմանը, պետականության ամրապնդմանը, խաղաղ համակեցության ապահովմանը: Այս տեսանկյունից, մեզ գլխավորապես հետաքրքրում է Աքեմենյան աշխարհակալության հիմնադիր Կյուրոս Բ Մեծի<sup>2</sup> քաղաքականությունը՝ կապված հպատակ ժողովուրդների՝ գլխավորապես հրեաների հետ: Ընդ որում, կայսերական իշխանության և նվաճված ժողովուրդների փոխհարաբերությունները հիմնարար դարձան տերության հետագա գոյության, առաջընթացի և ծավալման համար: Ձևավորվում էր Աքեմենյան տերության

<sup>1</sup> Ծիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի հայցորդ, էլ-փոստ՝ nahapetyanani13@mail.ru

<sup>2</sup> Կյուրոս Մեծը կարևոր տեղ է զբաղեցնում պատմական սկզբնաղբյուրներում: Իր թողած արձանագրություններում Կյուրոսն իրեն անվանում է «մեծ արքա, որդի Կամբյուսես արքայի, Աքեմենյան»: Տե՛ս Kent R., Old Persian. Grammar. Texts. Lexicon, New Haven, 1950, p. 116. Այլ արձանագրություններում պարսից արքան կոչվում է «Անշանի թագավոր, ամբողջ աշխարհի ու երկրների թագավոր...» (տե՛ս Pritchard, J. B., Ancient Near Eastern Texts Relating to the Old Testament. 3rd edition, Princeton. New Jersey, 1969, pp. 315-316): «Էրողոտոսը և Քսենոփոնը Կյուրոսին ներկայացնում են որպես մեղմ ու հանդուրժող կառավարիչ, որն ուներ արքայական ծագում. «Նա մահացավ ժողովուրդների հայր տիտղոսով...»: Մանրամասն տե՛ս «Էրողոտոս, Պատմություն ինը գրքից, թարգմ. Ս. Կրկաշարյանի, Երևան, 1986, I, III, VII, 107-108, 89, 11; Ксенофонт, Киропедия, издание подготовили Борухович В. Г. и Фролоф Э. Д., Москва, 1976, VIII, 8, 1-2. Կյուրոս Մեծի կյանքի ու գործունեության մասին «Էրողոտոսի, Քսենոփոնի, Կտեսիասի հաղորդումների վերլուծությունը տե՛ս Фрай П., Наследие Ирана, пер. Ливишца В.А. и Зеймалы Е.В., 2-е изд., Москва, 2002, с. 115-117.

գաղափարախոսական առանցքը, որտեղ քաղաքական-տնտեսական շահերը սերտորեն առնչվում էին կրոնապաշտամունքային իրողություններին: Միաժամանակ, կարևոր նշանակություն էին ձեռք բերում ինտեգրացիոն գործընթացները՝ որպես բազմէթնիկ կայսրության համախմբման միջոց: Այս պարագայում Աքեմենյանների ներքին քաղաքականության ռազմավարական խնդիրը սատրապությունների «իրանականացումն»<sup>3</sup> էր, ինչպես նաև տարատեսակ շրջանների ընդգրկումը կայսրության վարչական, տնտեսական և մշակութային կյանքին<sup>4</sup>:

Մի շարք տարածքներ նվաճելուց հետո<sup>5</sup> Կյուրոսը Մեծը մ.թ.ա. 539 թ. գրավում է Բաբելոնը, որից հետո արևմտյան բոլոր երկրները՝ մինչև Եգիպտոսի սահմաններ, կամավոր կերպով ենթարկվում են պարսիկներին<sup>6</sup>: Նա հրաշալի կերպով օգտագործեց Բաբելոնում առկա դժգոհություններն ու հակասությունները<sup>7</sup> և առանց լուրջ

<sup>3</sup>Սատրապությունների «իրանականացում» ասելով՝ նկատի ունենք ընդհանրական մշակութային տարածքի ստեղծում հանդուրժողականության ու սոցիալական համակեցության սկզբունքներով:

<sup>4</sup> Вергазов Р.Р., «Персидский мир». Механизмы культурной интеграции локальных элит северных и северо-восточных сатрапий Ахеменидов /Труды Института востоковедения РАН. Вып. 21. Древность: историческое знание и специфика источника. Избранные доклады и статьи / Отв. ред. выпуска Г. Ю. Колганова, А. А. Петрова. – М.: ИВ РАН, 2019, с. 111.

<sup>5</sup> Մանրամասն տե՛ս Ctesias' History of Persia, translated with commentaries by L. Llewellyn Jones and J. Robson, London, New York, 2010, pp. 171-172; Струве В. В., История Ирана с древнейших времен до конца VIII века, Ленинград, 1958, с. 13; Briant P., From Cyrus to Alexander: a history of the Persian Empire, trans. by Daniels P. T, Winona Lake, Indiana, 2002, pp. 31-33; Kuhrt A., The Persian Empire, vol. 1, 2007, pp. 60-65

<sup>6</sup> Կյուրոս Մեծի նվաճումների մասին տե՛ս Дандамаев М. А., Луконин В. Г., Культура и экономика древнего Ирана, Москва, 1980, с. 104-105; King of the seven climes: a history of the- ancient Iranian world (3000 BCE-651 CE), edited by Touraj Daryae, The Achaemenid Empire, Llewellyn-Jones L., UCI Jordan Center for Persian Studies, 2017, pp. 66-67; Judah and the Judeans in the Persian Period, edit. by Lipschits O. and Oeming M.,- Lipschits O. Achaemenid Imperial Policy, Settlement Processes in Palestine, and the Status of Jerusalem in the Middle of the Fifth Century B.C.E., Winona Lake, Indiana, 2006, pp. 24-25.

<sup>7</sup> Նաբուգոդոնոսոր II-ի մահից հետո Բաբելոնում սկսված ներքաղաքական ճգնաժամի արդյունքում իշխանությունն անցավ Նաբոնիդին, որը սակայն կարճ ժամանակ հետո ասելի դարձավ թե՛ հասարակ բաբելոնացիների, թե՛ քրմական ու ռազմական վերնախավի համար: Նաբոնիդը, հետաքրքրված լինելով որոշ հյուսիսային աստվածություններով և հովանավորելով ընտրված տաճարների, խախտեց հավասարակշռությունը կրոնական պրակտիկայում: Տե՛ս Куликан У., Персы и мидяне. Подданные империи Ахеменидов, пер. с англ. Игоревского Л. А., Москва, 2002, с. 61. Բանն այն է, որ Բաբելոնում որպես գերագույն աստված ընդունելի էր Մարդուկի պաշտամունքը, մինչդեռ Նաբոնիդը առաջ մղեց Լուսնի աստծո պաշտամունքը: Ամրապնդվելով գահին, նա սկսեց արհամարհել Մարդուկի հետ կապված ծեսերն ու



բարդությունների գրավեց այն<sup>8</sup>: Մինչ այդ՝ հեռատես արքան ձեռնարկել էր համապատասխան քայլեր՝ առկա ճգնաժամը ավելի խորացնելու ուղղությամբ: Մասնավորապես, բարձր գնահատելով Բաբելոնի տնտեսական և ռազմական ներուժը, Կյուրոսը սկզբնապես իր ամբողջ ուշադրությունը կենտրոնացրեց Առաջավոր Ասիայի հյուսիսային մասում իր իշխանության ամրապնդմանը՝ այդ կերպ մեկուսացնելով Բաբելոնը<sup>9</sup>: Բաբելոնի նվաճումը Կյուրոս Մեծի կառավարման շրջանի ամենակարևոր իրադարձություններից է, որն հնարավորություն տվեց պարսից արքային հսկողություն սահմանել ստրատեգիական նշանակություն ունեցող կարևոր առևտրական ուղիների վրա<sup>10</sup>: Այնուհետև Կյուրոս Մեծը ձեռնամուխ եղավ հսկայածավալ կայսրության ամրապնդմանը և քաղաքական ծրագրերի իրագործման նպատակով նվաճված երկրների ու ժողովուրդների հետ բարիդրացիական փոխհարաբերությունների կառուցմանը:

Կյուրոս II-ի ձեռնարկների մեջ առանձնահատուկ կարևորություն է ներկայացնում բաբելոնական գերության մեջ գտնվող հրեաների վերադարձն Իսրայել<sup>11</sup>: Հուդայացիները<sup>12</sup> Բաբելոնի առավել

---

տոնակատարությունները, միջամտել տանարների գործերին՝ ընդհուպ փոխելով ծիսակարգերը: Ըստ այդմ՝ Նաբոնիդը փոփոխության ենթարկեց բաբելոնյան աստվածաբանական միտքը:

<sup>8</sup>Բաբելոնի գրավման մանրամասների մասին տե՛ս Հերոդոտոս, I, 189-192; տե՛ս նաև Potts D., Mesopotamian civilization: the material foundations, Cornell University Press, 1996, pp. 22–23; Авдиев В. И., История Древнего Востока, изд. 3-е, Москва, 1970, с. 433-434; Дьяконов М. М., Очерк истории Древнего Ирана, Москва, 1961, с. 72; Michael Jursa, The Neo-Babylonian empire, University of Vienna, 2011, p. 6; Olmstead, A. T., The History of the Persian Empire, Chicago- London, 1949, p. 50.

<sup>9</sup> Авдиев В. И., նշվ. աշխ., էջ 478; Струве В.В., История Древнего Востока, Москва, 1941, с. 370.

<sup>10</sup> Forbes S., Prevas J., Power Ambition Glory, The Stunning Parallels between Great Leaders of the Ancient World and Today... and the Lessons You Can Learn, New York, 2009, p. 46

<sup>11</sup> Bertman S., Handbook to Life in Ancient Mesopotamia, Oxford University Press, 2005, pp. 95-96; Alstola, T., Judeans in Babylonia : A Study of Deportees in the Sixth and Fifth Centuries BCE. Leiden, 2020, pp. 5-6, 58; “Judah under the Neo-Babylonian Empire.” Israel and Empire: A Postcolonial History of Israel and Early Judaism. Perdue, Leo G., and Warren Carter. Baker, Coleman A., eds. London, 2015, pp. 69-70.

<sup>12</sup> Հուդայացիներ և հրեաներ տերմինները սերտորեն փոխկապակցված են: Հուդայացիներ կոչվում են Հարավային թագավորության բնակիչները կամ էլ իսրայելցիները Հուդայի ցեղից: Բաբելոնական գերությունից հետո «հուդայացի» անվանումը ընդունելի դարձավ Հուդայի ժողովրդի և Երուսաղեմի բնակիչների, իսկ հետո նաև սփռված հրեաների նկատմամբ: Ринкер Ф., Майер Г., Иудеи, иудаизм // Библейская энциклопедия Брокгауза. — Christliche Verlagsbuchhandlung Paderborn, 1999, с. 2383. Ինչ վերաբերում է հրեա բառին, պետք է նշել, որ Ծննդոց գրքում Նոյի որդի Մեմը կոչվում է «Ե(Է)բերի բոլոր որդիների» հայր: Համաձայն բիբլիական

կարևոր օտարածագում էթնոսներից մեկն էին, որոնք այստեղ էին հայտնվել դեռևս Նաբուգոդոնոսոր Բ-ի կողմից տասը հազար հրեաների բռնագաղթի ժամանակ<sup>13</sup>: Այս ժամանակաշրջանը լուսաբանող պատմական սկզբնաղբյուրների մեջ բացառիկ կարևորություն ունեն աստվածաշնչյան մարգարեների հաղորդումները: Գերության մեջ գտնվող հրեա մարգարեները գոտեպնդում էին իրենց ցեղակիցներին՝ կանխագուշակելով Բաբելոնի մոտալուստ անկումը և հրեաների վերադարձը հայրենիք<sup>14</sup>: Գրեթե բոլորի մոտ Կյուրոսը Մեծը հանդես է գալիս որպես մեսիա, ով ոչ միայն ազատագրեց հրեա ժողովրդին, այլև ընձեռեց հետագա գոյության և առաջընթացի հեռանկար: Ի տարբերություն ասորեստանցիների և բաբելոնացիների, որոնց իշխանությունը հենված էր լայնածավալ տեղահանությունների և ճնշումների վրա, Կյուրոսն ի սկզբանե որդեգրեց շատ ավելի մեղմ քաղաքականություն:

Սկսենք նրանից, որ դեռևս մ.թ.ա. 6-րդ դարի սկզբին Երեմիա մարգարեն իր քարոզներում գուշակել էր, որ հզոր մարերը, դաշնակից ունենալով ուրարտացիներին, մանացիներին ու սկյութներին, կկատարեն Եհովայի վրեժը և կկործանեն Բաբելոնը<sup>15</sup>: Ծարունակելով հրեաների գերության ավարտի և ազատագրության մասին կանխագուշակությունը՝ Երեմիան ասում է. «Եվ երբ յոթանասուն տարին լրանա, ես հաշվեհարդար կտեսնեմ Բաբելոնի թագավորի և այդ

---

տոհմաբանության՝ Եբերի որդիներին է պատկանում Փաղէկի և Յեկտանի ամբողջ սերունդը, որոնցից սերում է Աբրահամը՝ առաջին մարդը, ով Աստվածաշնչում կոչվել է հրեա: Կա նաև այլ մեկնաբանություն, որը համապատասխանում է Աբրահամի կենսագրությանը: Ըստ այդմ՝ հրեա կարող է նշանակել մարդ «ով եկել է այն կողմից (Եփրատից)»: Ժամանակի ընթացքում հրեա բառը ձեռք բերեց ավելի կոնկրետ նշանակություն: Այդպես սկսեցին անվանել բացառապես իսրայելցիներին՝ հակադրելով այլ ժողովուրդներին և մարդկանց, որոնք չունեին իսրայելական ծագում: Այլ մեկնաբանության համաձայն հրեա բառը օգտագործվում է նաև այն դեպքերում, երբ խոսքը գնում է գերեվարված հրեաների ազատագրությանը: Տե՛ս նույն տեղում, էջ 1535-1536:

<sup>13</sup>Խորիկյան Հ., Արաբիան և Պաղեստինը Աբեմենյան Պարսկաստանի վարչական բաժանման համակարգում, Արևելագիտությունը Հայաստանում, հատ. 2, Արաբագիտության արդի հիմնախնդիրները, Երևան, 2017, էջ 158: Նոր Բաբելոնական թագավորությունն, իր հզորության բարձրակետին է հասել Նաբուգոդոնոսոր II-ի օրոք և հանդիսանում էր այդ ժամանակի խոշորագույն պետությունը, իսկ Բաբելոնը, որն առևտրական կարևոր կենտրոն էր, իրենից ներկայացնում էր հզոր ու անմատչելի ամրոց: Տե՛ս Авдиев В. И., История Древнего Востока, с. 478.

<sup>14</sup> Дандамаев М. А., Политическая история Ахеменидской державы, Москва, 1985, с. 49.

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 49-50:

ազգի հետ... Եվ այնպես կանեն, որ այն դարեդար ամայի լինի»<sup>16</sup>: Մարգարեն, ըստ էության, կանխագուշակեց հրեաների գերությունից ազատագրվելը, որի մասին խոսվում է նաև Եզեկիելի մարգարեությունում. «... Ով չորացած ոսկորներ, լսեցե՛ք Տիրոջ խօսքը. Այսպես է ասում Տէր Եհովան այս ոսկորներին. Ահա ես ձեր մէջը հոգի պիտի դնեմ, եւ դուք պիտի կենդանանաք»<sup>17</sup>: Ամենայն հավանականությամբ, Եհովան վաղուց նախապատրաստել էր Իսրայելի վերածնունդը՝ հայտնելով այդ մասին մարգարեներին: Կյուրոս Մեծի հետագա գործունեությունը եկավ հաստատելու մարգարեական տեքստերի ճշմարտացիությունը:

Նվաճելով Բաբելոնը՝ Կյուրոս Մեծը հրապարակեց հրովարտակ՝ գերեվարված ժողովուրդների, այդ թվում՝ հրեաների հայրենադարձության մասին<sup>18</sup>: Բացի այդ, կարգադրեց վերականգնել Բաբելոնի, Էլամի, Իսրայելի տաճարները<sup>19</sup>: Պահպանված հրովարտակում գրված է, որ Կյուրոսը, հրամայելով վերականգնել Աստծո տաճարը Երուսաղեմում, ասում է. «Թող այս տաճարը կառուցվի այնտեղ, որտեղ զոհաբերություններ են կատարվում... բոլորը ծախսերը կհոգա թագավորական արքունիքը: Եվ Աստծո տաճարի ոսկե ու արծաթե անոթները, որոնք Նաբուգոդոնոսորը, վերցնելով Երուսաղեմի տաճարից, տարել էր Բաբելոն, թող վերադարձվեն Երուսաղեմ...»<sup>20</sup>: Այստեղ Կյուրոս Մեծը հանդես էր

<sup>16</sup> Աստուածաշունչ, Մատեան Հին և Նոր Կտակարանների, թարգմ. երբայական և հունական բնագրերից, Հայաստանի Աստվածաշնչային ընկերություն, 1999, Երեմիա, 25.12, էջ 883: «Փայլեցրե՛ք նետերը, վահանները լցրե՛ք, Տէրը զարթնեցրեց Մարաց թագաւորների հոգին. որ նորա մտածմունքը Բաբիլոնի վերայ է նորան փչացնելու համար. որովհետու Տիրոջ վրէժխնդրութիւնն է սա՛ իր տաճարի վրէժը»: Տե՛ս նույն տեղում, 51,11, էջ 920: Флавий Иосиф, Иудейские древности, Минск, 1994, 11, 1,1.

<sup>17</sup> Եզեկիել, 37. 4-5, էջ 979: Տե՛ս նաև J. M. L. Winn, New Perspectives on the Return from Exile and Persian-Period Yehud, The Oxford Handbook of the Historical Books of the Hebrew Bible edited by Kelle B. and Strawn B., Oxford University Press, 2020, p. 147.

<sup>18</sup> Այդ մասին տեղեկություններ կա ինչպես մարգարեական տեքստերում, այնպես էլ Կյուրոսի «գլան»-ում: Տե՛ս Kuhrt, Amélie, The Cyrus Cylinder and Achaemenid imperial policy, Journal for the Study of the Old Testament, 1983, p. 86; Abbot J., Cyrus the Great, New York and London 1902, p. 63; Куликан У., Персы и мидяне, с. 62.

<sup>19</sup> История Древнего Востока, под. ред. Кузищина В.И., 3-е изд., Москва, 2003, с. 293; Дандамаев М. А., Политическая история..., с. 44. Կյուրոս Մեծը ոչ միայն հրամայեց վերականգնել Երուսաղեմի տաճարը և թուլյատրեց հրեաներին վերադառնալ հայրենիք, այլև վերադարձրեց աստվածների պատկերները, որոնք Նաբուգոդոնոսորը տարել էր Բաբելոն: Տե՛ս Дьяконов М. М., Очерк истории Древнего Ирана, Москва, 1961, с. 72.

<sup>20</sup>Рак И. В., Эдикт Кира II о восстановлении Иерусалимского храма, Мифы древнего и раннесредневекого Ирана, СПб, 1998, с. 433.

գալիս որպես հրեական մշակույթի և կրոնի պահպանումն ու հովանավոր՝ շահելով հրեա ժողովրդի և գերագույն աստված Եհովայի համակրանքը: Ժամանակի տրամաբանության մեջ Ահուրամագրան համարվում էր ամենագոր, բայց մյուս աստվածները ևս հավասարապես արժանի էին երկրպագության: Այդ պատճառով Աքեմենյան պաշտոնական դիցարանը ներառում էր տասնյակ աստվածներ<sup>21</sup> :

Հին Արևելքի համար հատկանշական էր հավատքի ամբողջական ազատությունը, որի պատճառը ոչ թե քաղաքական մոտիվներն էին, այլ կեղծ կրոնի պատկերացման բացակայությունը<sup>22</sup>, որն էլ, ի թիվս այլ գործոնների, լուրջ ազդեցություն ունեցավ պարսից արքայի քաղաքականության վրա: Նոր ձևավորվող և զարգացող զրադաշտական կրոնը դեռևս լուրջ դեր չունեց պարսից արքաների քաղաքականության մեջ<sup>23</sup>: Հնդարիական աստվածների պաշտամունքը և դարերով արմատավորված ավանդույթները դժվարությամբ էին իրենց տեղը գիջում նոր ձևավորվող կրոնին: Բնականաբար, պարսից արքան չէր կարող անտեսել ժողովրդական տրամադրությունները, քանի որ դա կխարխլեր հսկայածավալ տերությունում ստեղծված հավասարակշռությունը. զանգվածների համար յուրաքանչյուր պաշտամունք և աստվածություն հավասար էին, ունեին գոյության իրավունք և ազդեցության գոտիներ: Եվ պատահական չէ, որ Կյուրոսը Բաբելոնում հանդես էր գալիս որպես Մարդուկ աստծո, Երուսաղեմում՝ Եհովայի երկրպագու, իսկ քաբելոնական գրվածքներում իրեն հպարտորեն անվանում է «Ամշանի մեծ արքա»՝ ընդգծելով իր նվիրվածությունը հազարամյա

<sup>21</sup> Bickerman E., *Studies in Jewish and Christian History*, vol. 1, Leiden, 1976, p. 93; Дандамаев М. А., *Месопотамия и Иран в VII-IV вв. до н. э.*, Социальные институты и идеология, Санкт-Петербург, 2009, с. 406.

<sup>22</sup> Дандамаев М. А., *Месопотамия и Иран в VII-IV вв. до н. э.*..., с. 379.

<sup>23</sup> Աքեմենյանների զրադաշտականների լինել-չլինելու հարցը այսօր էլ լուրջ քննարկումների առարկա է: Սակայն մի շարք հետազոտողներ ապացուցել են, որ առաջին Աքեմենյանների կրոնը որևէ ընդհանրություն չի ունեցել զրադաշտականության հետ: Կյուրոսի թաղման ծիսակարգը և դամբարանը հաստատում են պարսից արքայի զրադաշտական չլինելու հանգամանքը: Տե՛ս Արիանոս, Ալեքսանդրի արշավանքը, Երևան, 1987, VII, 29, 7, Страбон, *География* в 17 книгах, перевод, статья и комментарии Г. Стратановского, Ленинград, 1964, XV, 3, 6-8; Персия-Иран. Империя на Востоке, Автор.-сост. Широкоград, Москва, 2010, с. 4; Мейтарчян М., *Погребальные обряды зороастрийцев*, Москва, 2001, с. 95. Աքեմենյանների կրոնի վերաբերյալ եղած տարակարծությունների մասին տե՛ս Дандамаев М. А., Луконин В. Г., նշվ. աշխ., էջ 320-321.

միջազգետրյան-էլամական ավանդույթներին<sup>24</sup>: Հատկանշական է, որ Կյուրոս Մեծը հրամայեց վերականգնել իր նախորդների օրոք ավերված տաճարները, ինչպես նաև հովանավորեց նվաճված երկրներում հնագույն պաշտամունքների վերածնունդը: Ասվածը աղերսվում է ոչ միայն պարսից արքայի քաղաքական նպատակների հետ, այլև հստակ արտահայտում է արքայի կրոնական դիրքորոշումը: Բարեհաճությունը նվաճված ժողովուրդների կրոնամշակութային առանձնահատկությունների նկատմամբ փաստում է, որ Կյուրոսը գտնվում էր հնդիրանական հնագույն պաշտամունքների ազդեցության տակ: Անվիճարկելի է, որ դրանք զարգացել և բարդացել են մերձավորարևելյան ավելի քաղաքակիրթ ժողովուրդների ազդեցությամբ: Եվ քանի որ Իրանի ժողովուրդների հնագույն պատկերացումները առանձնանում են պարզունակությամբ ու մատչելիությամբ, բնականաբար, էլամական, բաբելոնական և եգիպտական կրոնները՝ իրենց զարգացած կրոնահոգևոր տեխնոլոգիայով, մեծ ազդեցություն են թողել հին իրանական կրոնի զարգացման վրա: Նույնը կարելի է ասել նաև Կյուրոս Մեծի պարագայում. նա լրջորեն չէր կարող հակադրվել Բաբելոնի և Եգիպտոսի զարգացած կրոնների ազդեցությանը: Բացի այդ, պարսից արքայի և՛ կրոնական դիրքորոշումը, և՛ քաղաքական նպատակները հակադրվելու անհրաժեշտություն չէին առաջացնում: Կյուրոսը հարգում էր այլ ժողովուրդների կրոնական պատկերացումները, գթասիրտ ու ողորմած էր իր հպատակների նկատմամբ և չէր պարտադրում պարսից կրոնն ու մշակույթը:

Հրեաների հայրենադարձությանը վերաբերող մյուս կարևոր սկզբնաղբյուրը «Կյուրոսի գլան»-ն է, որը համարվում է համաշխարհային պատմության մեջ մարդու իրավունքների ամենավաղ հռչակագիրը<sup>25</sup>: Հետազոտողների մեկ այլ խումբ նշում է, որ «Կյուրոսի գլան»-ը սովորական շինարարական արձանագրություն է՝ ասուրա-բաբելոնական ավանդույթների ոգով և ոչ մի դեպքում՝ մարդու իրավունքների հռչակագիր<sup>26</sup>: Այն ոճային նմանություն ունի Աշուրբանիպալի արձանագրության հետ, որը գտնվել է Բաբելոնի վերականգնման ժամանակ<sup>27</sup>: Շատ հետազոտողներ այն կարծիքին են,

<sup>24</sup> Дандамаев М. А., Месопотамия и Иран ..., с. 403, 419.

<sup>25</sup> Farrokh K., *Shadows in the Desert: Ancient Persia at War*, Oxford, U.K., Osprey, 2007, p. 44.

<sup>26</sup> Дандамаев М. А., *Политическая история Ахеменидской державы*, с. 43; Walker C. B. F., *A recently identified fragment of the Cyrus Cylinder*, «Iran», vol. 10, 1972, p. 159.

<sup>27</sup> Дандамаев М. А., *Политическая история Ахеменидской державы*, с. 43; Harmatta J., *The literary patterns of the Babylonian edict of Cyrus*, vol. 19, 1971, с. 217—231.

որ Կյուրոս Մեծը տեսել է բարեխոնական արքայի արձանագրությունը, իսկ քրմերն այն օգտագործել են որպես նախօրինակ՝ Կյուրոսի արձանագրության տեքստը կազմելու համար<sup>28</sup>: Մ.

Դանդամանը այն կարծիքին է, որ Մարդուկի քրմերը հույս ունեին, որ Կյուրոսի օրոք կվերականգնվի բարեխոնական քաղաքների ինքնավարությունը, և ձգտում էին նրա ուշադրությունը կենտրոնացնել այն ժամանակի վրա, երբ բարեխոնական քաղաքները պահպանում էին իրենց ավանդական իրավունքները<sup>29</sup>: Նշվում է նաև, որ հրովարտակը ունեցել է քարոզչական բնույթ՝ որևէ կերպ չարտացոլելով Կյուրոսի ընկալվելը կամ ընդունվելը հպատակների կողմից<sup>30</sup>: Ավելացնենք, որ հրովարտակը, արտահայտելով տերության պետական գաղափարախոսությունը, միաժամանակ ուղղված էր նվաճված ժողովուրդների և պարսիկների միջև խաղաղ համակեցության ապահովմանը:

Այստեղ ոչ միայն ներկայացվում են Կյուրոս Մեծի բարեգործությունները և Նաբոնիդի չարագործությունները<sup>31</sup>, այլև օրինականացվում է պարսից թագավորի իշխանությունը<sup>32</sup>՝ որպես օրինական դեկավարի: *Կյուրոսի գրանդ ներդաշնակ է աստվածաշնչյան մարգարեների հաղորդումներին և, ըստ էության, լրացնում ու ամբողջացնում է ընդհանուր պատկերը*: Չնայած հրովարտակի տեքստը վերաբերում է Մարդուկի օգնությամբ Բարեխոնի նվաճմանը, սակայն դրանում ավելի կարևորվում է այն հատվածը, որը կապված է գերեվարված ժողովուրդների հայրենադարձությանը և պաշտամունքի վերականգնմանը<sup>33</sup>: Կյուրոսն ասում է. «*Ես Տիգրիսի մյուս կողմում գտնվող [նախկինում կոչվող] սուրբ քաղաքներին, որոնց սրբավայրերը երկար ժամանակ է, ինչ ավերակներ էին... վերադարձրի այն կուռքերը, որ*

<sup>28</sup> Дандамаев М. А., Месопотамия и Иран в VII-IV вв. до н. э..., с. 70-71.

<sup>29</sup> Խոսքը վերաբերում էր Աշուրահիպալի կառավարման շրջանին, երբ բարեխոնական արքան, հետևելով իր նախնիի՝ Սարգոն 2-րդի օրինակին, բարեխոնական քաղաքներին տրամադրեց ինքնակառավարման հնարավորություն՝ ազատելով հարկերից ու զինվորական ծառայությունից: Տե՛ս Դандамаев М. А., Месопотамия и Иран в VII-IV вв. до н. э..., с. 71

<sup>30</sup> Чиглинецев Е. А., Рунг Э. В., Кир Великий: персидский царь в контексте мировой истории, т. 159, кн. 6., Казань, 2018, с. 1425.

<sup>31</sup> Kuhrt A., The Cyrus Cylinder..., p. 86: Куликан У., Персы и мидяне, с. 62. Քսենոփոնը ևս Նաբոնիդին անվանում է «պիղծ» մարդ, «աստվածների և մարդկանց թշնամի»: Տե՛ս Կсенофонт, Киропедия, V, 4, 35; VII, 5, 32.

<sup>32</sup> Մանրամասն տե՛ս Kuhrt A., The Cyrus Cylinder..., p. 93; Цилиндр Кира, пер. Дандамаева М. А., История древнего Востока: тексты и документы, под ред. Кузищина В.И., Москва, 2002, с. 386-387.

<sup>33</sup> Kuhrt A., The Cyrus Cylinder..., p. 84.

մի ժամանակ այնտեղ էին... Ես (նաև) հավաքեցի բոլոր (նախկին) բնակիչներին և վերադարձրի (նրանց) իրենց բնակավայրերը»<sup>34</sup>: Ավաճը գալիս է հաստատելու, որ հրովարտակը քարոզում է այնպիսի հիմնարար արժեքներ, ինչպիսիք են հանդուրժողականությունը, ազատությունը, հումանիզմը: Սակայն այս գաղափարների տարածումը հետապնդում էր ավելի լուրջ նպատակ՝ հող նախապատրաստել պարսից տերության ամրապնդման և հետագա ծավալման համար: Այս տեսանկյունից Կյուրոսի գլխի տերության ներքին ու արտաքին շահերին ծառայող փաստաթուղթ էր, որտեղ քարոզված գաղափարները գալիս էին վերահաստատելու, որ Կյուրոս Մեծը հարգում էր նվաճված ժողովուրդների ավանդույթները՝ որևէ կերպ չպարտադրելով սեփական մշակույթն ու հոգեկերտվածքը: Իսկ առհասարակ, այն թե Աքեմենյանները ինչքան հեռու էին նվաճված ժողովուրդներին իրենց կրոնը պարտադրելուց, ցույց են տալիս արձանագրությունները: Տեքստերից երևում է, որ Պերսետյոլիսում և Պարսկաստանի ու Էլամի այլ քաղաքներում թագավորական ամբարներից մթերքներ էին ուղարկվում ոչ միայն Ահուրամազդային և իրանական մյուս աստվածներին, այլև էլամական ու արքադական աստվածներին<sup>35</sup>:

Վերադառնալով Կյուրոսի քաղաքականությանը՝ պետք է փաստենք, որ արքայի գլխավոր խնդիրն իր ստեղծած տերության հետագա ամրապնդումն ու ընդլայնումն էր: Իսկ դրա համար անհրաժեշտ էր ապահովել հսկայածավալ կայսրության ժողովուրդների խաղաղ համակեցությունը: Այս կերպ, սիրաշահելով հրեաներին, նրանց տալով կրոնական ու պաշտամունքային ազատություն, տեղական ինքնակառավարման հնարավորություն, Կյուրոսը ձեռնամուխ եղավ պետականաշինության գործին՝ լուծելով իր առջև ծառայած արտաքին քաղաքական հիմնախնդիրները: Հետաքրքիրն այն է, որ կային հրեաներ, որոնք, ելնելով իրենց անձնական շահերից և գործնական հետաքրքրություններից, չցանկացան վերադառնալ Երուսաղեմ և չնայած դրան, նրանք ևս ստացան կրոնի ու դավանանքի ազատություն<sup>36</sup>: Տեղին է մեջբերել Ռ. Ֆրայի այն միտքը, որ Կյուրոսի քաղաքականությունը ուղղված էր իր հիմնական նպատակի՝ Pax Achaemenica-ի ստեղծմանը, որի համար Կյուրոսը պետք է համագործակցեր նվաճված ժողովուրդների հետ<sup>37</sup>:

<sup>34</sup> Дандамаев М. А., Политическая история Ахеменидской державы, с. 42.

<sup>35</sup> Дандамаев М. А., Месопотамия и Иран в VII-IV вв. до н. э..., с. 419.

<sup>36</sup> Farrokh K., Shadows in the Desert..., p. 45; J. M. L. Winn, New Perspectives on the Return from Exile..., p. 147.

<sup>37</sup> Ռ. Ֆրայը, շարունակելով, ավելացնում է, որ Աքեմենյան տերության ընդհանրության ստեղծումը եղել է Գարեհի գործը, սակայն այդ ընդհանրության հիմքերը դրել է Կյուրոս Մեծը: St' u Фрай P., Наследие Ирана, с. 120.

Այս նախագիծը չէր կարող ազդեցություն չթողնել պարսից արքաների քաղաքականության վրա: Նույն կարծիքին է նաև Մ. Մ. Դյականովը, ըստ որի, հրեաներին վերադարձնելով հայրենիք՝ Կյուրոսը հետապնդում էր Եգիպտոսի հետ կապված քաղաքական նպատակներ, այլ կերպ ասած՝ ձգտում էր ստեղծել վստահելի հենակետ՝ ընդդեմ Եգիպտոսի<sup>38</sup>: Համաձայնելով այն տեսակետին, ըստ որի Կյուրոսը թույլատրեց հրեաներին վերադառնալ հայրենիք՝ օգտագործելով նրանց որպես պատնեշ Եգիպտոսի և իր տիրությունների միջև<sup>39</sup>, պետք է փաստենք, որ պարսից արքայի քաղաքականության առանձնահատկություններից էր կայսրության պաշտպանունակության ամրապնդումը: Ավաճող ենթադրում է, որ պարսից արքաները ոչ միայն պետք է կարողանային ճնշել հնարավոր խռովություններն ու ապստամբությունները, այլև ձեռնարկեին դրանք կանխելու արդյունավետ քայլեր: Մյուս էր ուղղված պետական կառավարման ապարատում ապակենտրոնացված վարչակարգի ստեղծումը: Այսինքն, չնայած տերության ընդհանուր գաղափարախոսությանը, անձայրածիր կայսրության տարբեր հատվածներն ունեին իրավիճակին համապատասխան գործելու, պետական-հասարակական, տնտեսական-մշակութային կյանքի կազմակերպման որոշակի ազատություններ: Հաջորդ քայլն ուղղված էր նվաճված երկրների քրմական ու ռազմական վերնախավի հետ բարիդրացիական հարաբերությունների հաստատմանը՝ հաշվի առնելով քրմության բացառիկ ազդեցությունը ժողովրդական լայն զանգվածների վրա: Կյուրոս Մեծը հնարամտորեն օգտագործեց ստեղծված իրավիճակը՝ Հրեաստանին տալով ինքնակառավարվող տաճարային պետության կարգավիճակ, որի համար հրեական քրմությունը, անշուշտ, պարտական էր պարսից արքային<sup>40</sup>: Պարսից արքաները, ինքնակառավարման հնարավորություն ընձեռնելով նվաճված ժողովուրդներին, ձգտում էին ստեղծել նպաստավոր պայմաններ այդ երկրներում տնտեսության զարգացման համար<sup>41</sup>: Համեմատության համար նշենք, որ նախկին խոշոր տերությունների անկումը հանգեցնում էր ոչ միայն քաղաքական փոփոխությունների, այլև ունենում էր տնտեսական լուրջ հետևանքներ: Օրինակ՝

<sup>38</sup> Дьяконов М. М., Очерк истории Древнего Ирана, с. 72.

<sup>39</sup> Abbot J., Cyrus the Great, p. 63. Տև'ու Եգիզարյան Է. Մ., Провинция Иуда: Историческая перспектива и статус в Ахеменидской Персии, «Преподаватель 21 век», № 1-2, Москва, 2008, с. 238.

<sup>40</sup> Дьяконов М. М., Очерк истории Древнего Ирана, с. 102.

<sup>41</sup> Եգիզարյան Է. Մ., Теократия и провинция Иуда: Миф или реальность, «Преподаватель 21 век», № 2-2, Москва, 2019, с. 266.



Ասորեստանի թշնամիներն ավերակների վերածեցին քաղաքային ու առևտրական կենտրոնները<sup>42</sup>: Մինչդեռ Աքեմենյան արքաները՝ մասնավորապես Կյուրոս Մեծը չէր ավերում նվաճված քաղաքները՝ չխաթարելով տնտեսության բնականոն զարգացումը. բարգավաճ տնտեսությունը հեռու կպահեր հպատակներին խռովություններից, ինչն էլ դյուրին կդարձներ քաղաքական ծրագրերի իրագործումը: Այլ կերպ ասած՝ սոցիալ-տնտեսական կայուն վիճակը կբարձրացներ արքայի հեղինակությունը և ժողովրդի վստահությունը կառավարման ապարատի նկատմամբ: Ի վերջո, անհնար էր արձանագրել ռազմաքաղական հաջողություններ՝ առանց համապատասխան տնտեսական կարողությունների: Առաջնային համարելով կայուն և զարգացած տնտեսության ստեղծումը՝ որպես նվաճողական քաղաքականության կարևոր նախապայման, Կյուրոս Մեծը հրեաներին հնարավորություն տվեց ապահովել իրենց բարեկեցությունը՝ հող ստեղծելով կայսրության ընդհանուր սոցիալական վիճակի բարելավման համար: Հրեաները հրաշալի կերպով օգտվեցին Կյուրոսի մեծահոգությունից՝ սկսելով կառուցել գաղափարական ու տնտեսական ամուր հիմքերով պետականություն: Նրանք սկսեցին ակտիվացնել իրենց երկրի տնտեսական կյանքը՝ Միջերկրական ծովում հիմնելով առևտրային կենտրոններ, որոնց շուրջը կազմավորվում և ամրապնդվում էին հրեական նոր համայնքներ՝ իրենց բնորոշ կառույցներով: Պետք է նկատի ունենալ, որ դեռ Նորբաբելոնական թագավորությունում հրեաները սկսեցին առաջատար դեր խաղալ առևտրի ոլորտում՝ ձեռք բերելով ահռելի հարստություն և կայուն եկամուտ: Նրանցից շատերը չվերադարձան հայրենիք, սակայն օգտագործելով իրենց քաղաքական ու տնտեսական կապերը՝ սատար կանգեցին իրենց հայրենակիցներին: Հրեական համայնքը փոխօգնության ճանապարհով սկսեց վերագտնել նախկին միասնականությունը և համախմբվել ընդհանուր գաղափարախոսության շուրջ, որը ենթադրում էր մշակութային, տնտեսական և քաղաքական վերելք:

Միաժամանակ, պարսից տերության ռազմավարությունը պահանջում էր նվաճված երկրների էլիտաների մասնակցություն՝ կայսերական իշխանության ձևավորմանը<sup>43</sup>: Կյուրոսի քաղաքականության սկզբունքներից էր արժանանալ նվաճված երկրների կառավարող վերնախավի՝ գլխավորապես

<sup>42</sup> Дандамаев М. А., Месопотамия и Иран в VII-IV вв. до н. э., с. 400.

<sup>43</sup> Briant P., From Cyrus to Alexander..., 2002, p. 79:

ազնվականության համակրանքին<sup>44</sup>: Այսինքն՝ հանդես գալով որպես նվաճված երկրների ավանդույթների, կրոնամշակութային իրողությունների պահապաններ, պարսից արքաները, այդ թվում՝ Կյուրոս Մեծը նախադրյալներ էին ստեղծում տեղական վերնախավի հետ ռազմաքաղաքական, սոցիալ-տնտեսական համագործակցության համար: Եվ քանի որ տեղական էլիտաները կարևոր դեր ունեին տարածաշրջանում պարսկական իշխանության կայունության պահպանման և վերահսկողության տեսանկյունից<sup>45</sup>, ինքնին ինտեգրացիոն գործընթացներում նրանք ձեռք էին բերում լուրջ դեր ու նշանակություն:

Վերադառնալով հրեաների՝ Բաբելոնում ունեցած կարգավիճակին՝ հարկ է նշել, որ գերեվարված հրեաները չունեին ընդհանուր տարածք, պետական ու սոցիալական կառույցներ, պաշտամունքային կենտրոն. Կյուրոսի հրովարատակը հանդիսացավ այդ ամենը վերագտնելու հնարավորություն: Սկսվեց հրեաների հավաքագրման գործընթացը, որն անհրաժեշտ նախապայման էր պետականության ստեղծման և պատմական զարգացման ճանապարհին: Ճիշտ է՝ հրեական համայնքը ստացավ բազմաթիվ արտոնություններ, սակայն գտնվում էր պարսկական իշխանության արդյունավետ վերահսկողության տակ: Այն ընդամենն Աքեմենյան կայսրության նահանգ էր, չնայած որ պահպանել էր որոշակի առանձնահատկություններ, որի շնորհիվ էլ Հրեաստանը ընկալվում էր որպես ինքնիշխան պետություն<sup>46</sup>: Միաժամանակ հրեաները կարողացան հմտորեն օգտագործել իրենց ընձեռված պատմական բացառիկ հնարավորությունը. նրանք դուրս եկան մեկուսացումից՝ տարածվելով ամբողջ պարսկական աշխարհում և ենթակա տարածքներում, ամենուր ներմուծելով իրենց հոգևոր մշակույթի տարրերը:

Փաստորեն, երկար տարիներ գերության մեջ ապրող ժողովուրդը՝ շնորհիվ Կյուրոսի, վերագտնում է իր հայրենիքը: Ինքնըստինքյան, պարսից արքան դառնում է փրկչին հավասարազոր, ով եկավ վերջ տալու հրեաների երկարամյա տանջանքներին: Կյուրոսը նույնացվում էր մեսիայի՝ Աստոճ օծյալի, թագավոր-ազատարարի հետ, որին հրեաները սպասում էին<sup>47</sup>: Ըստ երևույթին,

<sup>44</sup> Дьяконов И. М., История Мидии, с. 144.

<sup>45</sup> Вергазов Р.Р., «Персидский мир», с. 113.

<sup>46</sup> Егизарян Э. М., Провинция Иуда..., с. 238.

<sup>47</sup> Дьяконов М. М., Очерк истории Древнего Ирана, с. 102; Дандамаев М. А., Месопотамия и Иран ..., с. 52.

մարգարեություններում Կյուրոսի գործունեությունն ամբողջությամբ ներկայացվում է որպես աստվածային կամքի դրսևորում և կանխավ որոշված իրողություն: Այստեղ հետաքրքիր է մեջբերել Հովսեփոս Փլավիոսի տեղեկությունները, համաձայն որոնց Կյուրոսը կարդացել է Եսայու մարգարեությունը, որտեղ մասնավորապես ասվում է. «Աստված, Կյուրոսին դարձնելով շատ ու մեծ ազգերի թագավոր, կամենում է, որ նա Իր (այսինքն՝ հրեա) ժողովրդին վերադարձնի հայրենիք և կառուցի Իր տաճարը»<sup>48</sup>: Հրեա պատմիչը, շարունակելով, ավելացնում է, որ երբ Կյուրոսը կարդում է դա, խոնարհվում է Աստծո առաջ և ձեռնամուխ լինում կանխորոշվածի կատարմանը<sup>49</sup>: Հովսեփոս Փլավիոսը նաև տեղեկություններ է հաղորդում պարսից արքայի հրովարտակի մասին, որով թույլատրվում է վերակառուցել Երուսաղեմը և Աստծո տաճարը: Ասվածը հաստատվում է Եզրասի գրքում գրված երկու տարբերակով՝ արամեերեն և եբրայերեն<sup>50</sup>: Մ. Դանդամանը գրում է, որ այս երկու տարբերակի վերաբերյալ կան բազմաթիվ տարակարծություններ, սակայն Է. Բիքերմանը համոզիչ ցույց է տվել, որ մենք գործ ունենք երկու անկախ և իրական փաստաթղթերի հետ: Այս կերպ՝ արամեերեն տեքստը թագավորական դիվանատան պաշտոնական հրամանն էր, իսկ եբրայերեն տեքստը նախատեսված էր Երուսաղեմում բանավոր հայտարարություն անելու համար, ուստիև կազմվել էր տեղական ավանդական դարձվածաբանության համաձայն<sup>51</sup>: Քանի որ պատմագիտության մեջ հիմնականում համակարծիք են նշված փաստաթղթի հավաստիությանը, կարելի է եզրակացնել, որ Կյուրոսը հրեաների աստծուն ոչ միայն հավասարազոր է դիտում պարսից աստվածների հետ, այլև խոսում է իր իշխանության աստվածատուր լինելու մասին. «Պարսից Կյուրոս արքան ասում է, որ երկրի բոլոր թագավորություններն իրեն տվել է Երկնից Աստվածը՝ Եհովան՝

<sup>48</sup>Флавий Иосиф, Иудейские древности, 11, 1, 2. Այս կանխագուշակությունն արվել է տաճարի ավերումից 140 տարի առաջ: Կյուրոսը, կարդալով այն, հիացավ աստվածային գործությամբ:

<sup>49</sup> Նույն տեղում: «Իմ հովիւն ես. եւ իմ բոլոր կամք նա պիտի կատարէ, եւ պիտի ասէ Երուսաղէմին թէ Շինուիք եւ տաճարին թէ Հիմնուիք»: Տէն Եզրաս, 44. 28, էջ 829:

<sup>50</sup> Մինչև 1896թ. հետազոտողների մի մասն այդ փաստաթղթերը համարել են հավաստի, մյուս մասը՝ կեղծ: Այսօր հետազոտողների մեծ մասը չի կասկածում այդ փաստաթղթերի իսկությանը: Մանրամասն տե՛ս Դանդաման Է. Ա., Луконин В. Г., Культура и экономика древнего Ирана, с. 21-22.

<sup>51</sup> Дандамаев М. А., Политическая история Ахеменидской державы, с. 51; Bickerman E. J., The Edict of Cyrus in Ezra I, in: Bickerman E. J., Studies in Jewish and Christian history, pp. 72-108.

պատվիրելով Երուսաղեմում իր համար տուն շինել»<sup>52</sup>: Կյուրոսը շարունակում է. «Ամեն ոք թող գնա Երուսաղեմ և կառուցի Բարայելի Աստծո՝ Եհովայի տունը»<sup>53</sup>: Այս հրովարտակով Կյուրոսը նախ հանդես էր գալիս որպես օրինական ղեկավար, միաժամանակ, խուսափում էր ցանկացած ըմբոստացումից: Եվ ամենակարևորն այն է, որ Կյուրոսը շահում էր և՛ բարելոնացիների, և՛ հրեաների համակրանքը, իսկ հետագայում նաև՝ հովանավորությունն ու օգնությունը՝ իր քաղաքական ծրագրերի իրագործման համար՝ կապված մասնավորապես Եգիպտոսի հետ: Բարելոնի նվաճումից հետո հնագույն քաղաքակրթություններից ամենահզորը մնացել էր Եգիպտոսը<sup>54</sup>, ուստի պատահական չէր, որ պարսից արքայի քաղաքական առաջնահերթությունների մեջ այն ուներ կարևոր նշանակություն: Կրկին փաստենք, որ Կյուրոսի երկրպագությունը Եհովային, Մարդուկին և այլ ժողովուրդների աստվածներին պայմանավորված չէր միայն քաղաքական խորաթափանցությամբ. բոլոր աստվածներն էլ համարվում էին ամենազոր, ուստիև պետք էր ստանալ բոլորի բարեհաճությունը: Ասել է թե՛ անհանդուրժողականություն և թշնամանք այլ ժողովուրդների հավատալիքների նկատմամբ պարզապես չկար:

Ինչ վերաբերում է Եսայու մարգարեությանը, ավելացնենք, որ այստեղ ևս Կյուրոս Մեծը հանդես է գալիս իբրև փրկիչ: Չնայած որ Հովսեփոս Փլավիոսը փորձում է Կյուրոսի ամբողջ գործունեությունը ներկայացնել որպես աստվածային նախախնամություն և Եսայու մարգարեությունը կարդալու ու դրանից ոգեշնչվելու արդյունք, պետք է փաստել, որ Կյուրոսի ամբողջ քաղաքականությունն ինչպես հրեաների, այնպես էլ մյուս ժողովուրդների պարագայում, թելադրված էր իր տերության ազգային-քաղաքական գաղափարախոսությամբ և իր առջև դրված քաղաքական նպատակներով: Միաժամանակ, Եսայու մարգարության մեջ հստակ կանխորոշված էր Կյուրոս Մեծի կողմից աշխարհակալ պետության ստեղծումը, նրան էին հնազանդվելու բոլոր

<sup>52</sup> Եզրաս, 1. 2, էջ 564:

<sup>53</sup> Եզրաս 1. 3, էջ 564: Եզրասը նաև տեղեկություններ է հաղորդում տաճարի կառուցման մանրամասների, ինչպես նաև Նաբուգոդոնոսոր 2-րդի հափշտակած գանձերի մասին: Կյուրոսի հրովարտակում մասնավորապես ասվում է. «...այն տունը շինուի իբրև տեղի ուր որ գոհեր են մատուցանում, եւ նորա հիմերը հաստատուին. նորա բարձրութիւնը վաթսուն կանգուն, նորա լայնութիւնը վաթսուն կանգուն... Նաւու Աստուծոյ տան ոսկեղէն եւ արծաթեղէն անօթները, որ Նաբուգոդոնոսորը հանել էր Երուսաղեմումն եղող տաճարից եւ բերել Բաբիլոն, ետ տրուին եւ գնան Երուսաղեմի տաճարը՝ իրանց տեղը, եւ դրուին Աստուծոյ տանը»: Տե՛ս Եզրաս 6. 3-5, էջ 569-570:

<sup>54</sup> Farrokh K., *Shadows in the Desert...*, p. 44.

երկրներն ու ժողովուրդները, և այս ամենը կատարվելու էր Եհովա աստծո կամքով և ցանկությամբ: Եսային ասում է. «Այսպես է ասում Տէրը իր օծեալին՝ Կիրոսին, որին ես բռնել եմ աջ ձեռքիցը, որ ազգերը իջեցնեմ նորա առաջին, եւ թագաւորների երանքները թուլացնեմ, որ բանամ նորա առաջին դռների փեղկերը... Ես պիտի գնամ քո առաջից... պղնձի դռները պիտի փշրեմ, եւ երկաթի նիզերը պիտի կտորատեմ: Եվ քեզ պիտի տամ խաւարի միջի գանձերը...»<sup>55</sup>:

Այսպիսով՝ պարզ է դառնում, որ հրեա-պարսկական համագործակցությունը, փոխադարձ համակրանքը և միմյանց սիրաշահելու փաստը երկուստեք խիստ ձեռնտու էր: Հրեաները, շնորհիվ Կյուրոսի, ոչ միայն ազատագրվեցին գերությունից, այլև վերադարձան իրենց հայրենիք՝ ձեռք բերելով խաղաղություն, ներքին ինքնուրույնություն, կրոնի ու պաշտամունքի ազատություն: Տնտեսական ու քաղաքական ձեռքբերումներից գատ՝ Կյուրոսի բարեհաճ վերաբերմունքը հրեաների համար ունեցավ նաև կրոնական նշանակություն: Կրկին ուժեղացավ հայրենասիրությունը և ամրապնդվեց հավատը Եհովայի հանդեպ: Ըստ նրանց՝ գերությունից ազատագրումը Եհովայի ողորմության ու բարի կամքի դրսևորումն է, որը Կյուրոսի միջոցով հրեաներին իրենց վաղեմի կյանքը վերագտնելու հնարավորություն ընձեռեց: Հրեաների մեջ կրկին ամրապնդվեց ընտրյալ ժողովուրդ լինելու գաղափարը, որն, անշուշտ, լրջագույն ազդեցություն ունեցավ նրանց պատմական ճակատագրի վրա: Պայծառ ապագայի մասին մարգարեական կանխատեսումները դարձան իրական, և հրեաները անհրաժեշտ քայլեր ձեռնարկեցին հզորանալու և իրենց թշնամիներին հակադրվելու համար: Իսկ Կյուրոսն իր հեռատես քաղաքականությամբ հող նախապատրաստեց Աքեմենյան պետության հետագա ծավալման ու բարգավաճման համար: Ինչպես կարելի է ենթադրել՝ Հին Կտակարանից, Կյուրոս Մեծի մեղմ քաղաքականությունը նվաճված ժողովուրդների նկատմամբ ամրապնդեց պարսից արքայի իշխանությունը Սիրիա-պաղեստինյան տարածաշրջանում<sup>56</sup>:

Եվ չնայած Կյուրոսի բաղձալի երազանքը՝ Եգիպտոսի նվաճումը, իրականություն չդարձավ՝ իր սպանության պատճառով, նրա ստեղծած հիմքերը հնարավորություն տվեցին որդուն՝ Կամբյուսեսին իրագործել հոր ցանկությունը<sup>57</sup>: Եգիպտոսի նվաճումն իրողություն դարձավ

<sup>55</sup> Եսայի, 45. 1-3, էջ 829:

<sup>56</sup> Фрай Р., Наследие Ирана, с. 120.

<sup>57</sup> Ctesias' History of Persia, p. 177; Куликан У., Персы и мидяне, с. 66-67; Струве В. В., История Ирана с древнейших времен до конца VIII века, Ленинград, 1958, с. 15-16.

Կյուրոսի հեռատես քաղաքականության և ձեռնադրած ջանքերի շնորհիվ: Ինքնընտանացյան, հասկանալի են դառնում և՛ մարգարեների կողմից պարսից արքային իդեալականացնելու միտումը, և՛ Կյուրոսի հետաքրքրությունն ու համակրանքը հրեաների նկատմամբ: Պատմության մեջ առաջին անգամ համաշխարհային տերությունը ապահովում էր հրեական կրոնի, սովորույթների և մշակույթի գոյությունը<sup>58</sup>:

Կյուրոսի քաղաքական հայեցակարգը տարբերվում էր ասորեստանյան և բաբելոնական արքաների քաղաքականությունից. պարսիկների մոտ ռազմական հարկադրանքը մեծ տեղ չուներ: Այլ կերպ ասած, Կյուրոսը քաջ գիտակցում էր, որ երբեք չի կարողանա պահպանել կայսրությունը՝ հենվելով դաժան ռազմական ուժի վրա<sup>59</sup>: Այս դեպքում հարգանքը տեղական մշակույթների նկատմամբ կապահովեր հպատակների հավատարմությունն ու կայսրության ամրությունը: Կյուրոս Մեծի հանդուրժողական քաղաքականությունը տարբեր երկրների սովորույթների և մշակութային ավանդույթների նկատմամբ, ինչպես նաև պետության ներսում օրենքի գերակայության հաստատումը, մի կողմից նպաստեց տեղական մշակույթի և ավանդույթների զարգացմանը, մյուս կողմից ամրապնդեց մշակութային և տնտեսական կապերն ու փոխազդեցությունները<sup>60</sup>: Հոգևոր-գաղափարախոսական տեսանկյունից Կյուրոսը գործում էր տվյալ ժամանակի ոգուն համապատասխան: Այսինքն՝ այլ ժողովուրդների ու ցեղերի հավատալիքների և աստվածությունների պաշտամունքը սովորական, բնական իրողություն էր:

Ինչ վերաբերում է Կյուրոսի քաղաքականության առանձնահատկություններին, դժվար չէ գուշակել, որ հրեաներն ու Հրեաստանը պետք է հենակետ դառնային Կյուրոսի նվաճողական քաղաքականության համար, որն, անշուշտ, դժվար կլիներ առանց հրեաների գործուն ակցակցության: Հրեաներին վերադարձնելով հայրենիք՝ պարսից արքան, ըստ էության, ոչ միայն ձեռք էր բերում հուսալի դաշնակից և ամուր հենարան՝ Եգիպտոս արշավելու համար, այլև ապահովում էր խաղաղ համակեցություն բազմազգ

<sup>58</sup> Farrokh K., *Shadows in the Desert*, p. 45.

<sup>59</sup> Farrokh K., *Shadows in the Desert*, p. 47. Իր գործունեությամբ Կյուրոսը հանդես եկավ որպես իր ժամանակի առաջադեմ հասարակական պահանջների արտահայտող, ինչն էլ հիմք հանդիսացավ նրան դիտարկել որպես հին ժամանակների համաշխարհային պատմության նշանավոր դեմքերից մեկը: Տե՛ս Гафуров Б. Г., К 2500-летию Иранского государство, История Иранского государства и культуры, под ред. Гафуров Б. Г., Москва, 1971, с. 10.

<sup>60</sup> Տե՛ս Гафуров Б. Г., К 2500-летию Иранского государство, с. 34.

կայսրությունում, որն իր հերթին կարևոր էր պարսից արքայի քաղաքական ծրագրերի իրագործման և արտաքին նվաճումների համար:

Փաստորեն՝ Կյուրոս Մեծը նոր որակ հաղորդեց իշխանություն-ժողովուրդ կապին՝ և՛ իր, և՛ նվաճված ժողովուրդների աչքում ներկայանալով որպես բարեգործ-բարեպաշտ արքա: Միահյուսելով կրոնական ու քաղաքական ավանդույթները՝ պարսից արքան նպատակադրված գնում էր իր քաղաքական ծրագրերի իրագործման ճանապարհով:

## **ЕВРЕИ В ПОЛИТИЧЕСКИХ ПЛАНАХ КИРА II ВЕЛИКОГО И ОБРАЗ ПОСЛЕДНЕГО В "БИБЛИИ"**

*Ани Нагапетян*

**(Резюме)**

Еврейско-персидское сотрудничество, взаимное уважение и факт взаимной симпатии были очень выгодны. Евреи и Иудея должны были стать точкой опоры для завоевательной политики Кира, которую, конечно же, сложно было осуществить без значимого содействия евреев. Возвратив евреев на родину, персидский царь не только приобретал верного союзника и крепкого соседа для похода в Египед, но и обеспечивал мирное жительство в многонациональной империи, которое в свою очередь было важно для осуществления планов персидского царя для внешних завоеваний. А евреи, благодаря Киру, не только освободились из плена, но и возвратились на свою родину, приобретая свободу, внутреннюю самостоятельность, свободу религии и вероисповедания.

## **JEWS IN THE GREAT POLITICAL PROGRAMS of CYRUS II AND THE LATEST CHARACTER IN "THE BIBLE"**

*Ani Nahapetyan*

**(Summary)**

Persian cooperation, mutual sympathy, and the fact of favouring each other were very beneficial for both of them. The Jews and Judaism were to become the basis for Cyrus' conquest policy, which would, certainly, be difficult to implement without the active support of the Jews. By returning the Jews to their homeland, the Persian king not only gained a reliable ally, a stronghold for invading Egypt but also provided peaceful coexistence in a multinational Empire, which, in turn, was essential for the implementation of the political plans and the external achievements of the king of Persia. And the Jews, thanks to Cyrus, were not only released from captivity but also returned to their homeland, gaining peace, internal autonomy, freedom of religion and cult.